№ 24

Կիրակի 1 փետրուարի
1915 թ.

Յաւելուած № 5

ԱՐԵՒ

№ 24

Կիրակի 1 փետրուարի
1915 թ.

Յաւելուած № 5

Գրական-պատմական պատկերազարդ յաւելուած

«Արև»-ի յաւելուածը թերթի հետ միասին ամեն տեղ արժէ 5 կոպէկ։



ՄԵՐ ՀԵՐՈՍՆԵՐԸ

—

Այս խմբանկարի մէջ գտնւում են մեր ազատագրական շարժման սիրելի դէմքերը։ Կենտրոնում՝ խոհուն ԱՐՄԷՆ ԳԱՐՕՆ, որ Օսմանեան բանկի հերոսն է, որ մեծ դեր խաղաց ինքնապաշտպանութեան ժամանակ, որ յետոյ եղաւ Օսմանեան պարլամէնտի անդամ և որ այժմ հայ կամաւորական երկրորդ գնդի հրամանատարն է Դրօի փոխարէն։

Աջ կողմը, ծայրում, անձնուէր ՄԱՐՏԻՐՈՍՆ է, որ պատանեկան ոգեւորութեամբ մտաւ գործի մէջ և որ մեռաւ Պարսկաստանի ազատութեան համար։ Այս հրաշալի երիտասարդ Դրօի ամենամօտ ընկերն է, որոնց նկարը արդէն տպել ենք «Արև»-ի յաւելուածում և որոնց մասին մի քանի տող ենք նուիրել։

Մարտիրոսի կողքին՝ ՔԻԻՐԴ ԽԷՋՕՆ է, որ մեր շարժման համեստ զինուորներից է և որ սպանուել է Բագւում։

Արմէն Գարօից դէպի ձախ, թեք վիճակի մէջ, ժողովրդական նշանաւոր հերոս ՍԵԻ ՔԱՐԵՑԻ ՍԱՔՕՆ, որ մեռաւ Երևանում 1908 թուին և որի մասին թէ «Արև»-ում և թէ յաւելուածում խօսել ենք վերջերս։ Նրանից դէպի ձախ, ծայրում, յայտնի ԽԷՋՕՆ, որ փոթորկալից անցեալ ունի, որ եղել է Եփրեմի գործակիցը Պարսկաստանում և որ այժմ Արմէն Գարօի հետ միասին վարում է հայ կամաւորների երկրորդ գունդը։ Նրա ու Արմէն Գարօի միջև նստած է ԴՐՕՆ, նոյն գնդի խիզախ հրամանատարը։

ԸՆԿԵՐՔ «ԿԵՄՐԵԻՕՐԻՆ»

«Или со щитомъ, или на щитѣ»

—

Մի քանի տարի առաջ նրանք գըժտուած բաժանուեցին—Յասմիկը և խենթ սիրահարն այն ամենի, ինչ նըման չէ ամենին, մինչ իսկ իր նմանին։ Տարօրինակ էր ու հետաքրքրական Բօրիսը. վայելչակազմ ու թիկնեղ, սև, կրակոտ աչքերով, աչքեր, որոնց փայլը մթութեան մէջ անգամ նկատելի է—աւելի ճիշտ՝ զգալի։ Սև հեր գանգուրները քամուն տուած, լօգիքը միշտ ուսերին, որի ծածանումները յաճախակի երևան էին հանում նրա ուսանողական համեստ համազգեստը, նա ժամերով թափառում էր սարերի անտառների մէջ կորած ամառանոցներից մէկի դաշտերն ու ձորերը, միշտ մենակ ու լուռ, միշտ իր հետ... մինչև ծանօթացան նա ու Յասմիկը։ Տարօրինակ էր ու հետաքրքրական նաև այդ ծանօթութիւնը, պատահական ամառանոցային մի ծանօթութիւն, որ սակայն հէնց առաջին օրից գրաւեց մօտիկների ուշադրութիւնը։ Լաւկեաց այդ «կնատեացը», ինչպէս յայտնի էր նա ծանօթ-ընկերների շրջանում, իր սիրած հեռաւոր դաշտերն ու իրենց կանաչ գանգուրները քմահաճօրէն թափահարող անտառները փոխեց այն ջահիլ, տրամադրութեան թեթևութեամբ ապրող աղջկանով...

* * *

— Ա՜խ իմ երազ, իմ ցնորք աղջիկ, թող քունդ օրօրեմ սազարթների շըրշիւնի հետ ու պահապան հրեշտակի նման հսկեմ քեզ մինչև լոյս, հսկեմ քո քունը մինչև լոյս, իմ թագուհիս... մրմնջում էին «կնատեաց»-ի շուրթերը երեկոյեան իրենց սովորական զբօսանքների ժամանակ, երբ երբեմնապէս դադար կառնէին կանաչների միջի նստարանների, կամ ուղղակի կանաչների վրայ։

Ժամերով թափառում էին միասին յաճախ լռութեան ուղեկցութեամբ. յաճախ էլ Բօրիսը կըպատմէր իր սովորական թախծոտ բողոքի շեշտով մեռնող ծաղկի, ընկնող աստղի, թառամող կանաչի վիշտը... Ամեն արեծագի Յասմիկը ծաղկեփունջ կըստանար ու մինչ արևմուտ ու մինչ ուշ գիշեր կըլսէր իր այդ պատահական ծանօթի զրոյցը. ու կըզրուցէր նա ծաղիկների միատեկ սիրուց, աստղերի նազ թարթումներից, գարնան երեկոյի թովչութիւնից ու այդ ամենի հետ այնպէս քմահաճօրէն զուգորդուող իր երազից, իր անձկութիւնից...

Թէ ով էր իր նոր ծանօթը, Յասմիկը շատ քիչ էր հետաքրքրւում. ամառանոցային թեթև ծանօթութիւն էր թւում, որ կըվերջանայ հէնց ամառանոցում ապրելիք օրերի հետ։ Գիտէր միայն, որ եկել է հեռուից, շատ հեռուից Արազի ափերից, որ շատ է սիրում Արազը ու իրեն Արազի որդի էր անուանում, գիտէր նաև, որ երկար թափառել է երկրից երկիր, երկար ապրել բանտերում ու նորից թափառել ու որ վերջապէս դատի տակ է իբրև տիրող քաղաքական պայմանների դէմ ծառացող մի ըմբոստ։ Այս բոլորը Յասմիկը լսել էր պատահական խօսակցութիւններից. աւելի գիտենալ չէր էլ ցանկանում. չէ՞ որ ամառանոցային մի թեթև ծանօթութիւն էր թւում միայն։

* * *

Օրերն անցնում էին աննկատելի։ Արեծագից մինչ արևմուտ ու մինչ ուշ գիշեր զրուցում էր Բօրիսը այն ամենի մասին, ինչի կարող է տրամադրել միայն ամառուայ երեկոն հարաւի պարզ երկնակամարի տակ ու աննկատելի անցնում էր իր սիրուն, իր հոգու կարօտին...

— Իմ անձկալիս, թող որ մինչ նոր արեծագ ծծեմ քո հմայքներիդ բոյրը, զգամ ինձ մօտիկ թովչութիւնդ կանացի. թող համբուրեմ շուրթերդ դողդոջ... իմ ոսկի բացառութիւն։ Ու նըրանք գժտուեցին։ Աղջիկը տարուած էր մի ուրիշով։ Առանց հրաժեշտի ու մինչ իսկ առանց նոր հանդիպումի յոյսի աղջիկը հեռացաւ ամառանոցից։ Բօրիսն էլ վշտացած թողեց այն երկիրը, ուր իր յաւէտ երերուն տրամադրութեան թեթևութեամբ Յասմիկն էր ապրում՝ տարուած մի ուրիշով ու հեռացաւ սրտով և ազգով օտարների մօտ մոռացուելու և մոռանալու ու խելակորոյս նետուեց նոր պայթող եղբայրասպան կռուի մէջ, արիւնի ու արցունքի ձայնով պահ մի լռեցնել տալու սրտի տրտունջները, մինչև մի նոր փոթորիկ նախագուշակող մթին ամպերը կուտակուեցին իր հայրենիքի ջինջ երկնակամարի վրայ... Թռչնից թև առած, հովից էլ թեթև սլացաւ դէպի նոր հեռուները բոսոր հեռանկարներով։

* * *

Մի քանի գարնան Յասմիկը նորից այցի էր գնացել այն ամառանոցը, ուր իր դժգոյն ամառներից մէկի օրերը այնպէս վարպետօրէն գունաւորել էր Արազի տղան—բայց նրան էլ չէր պատահում։ Ու աշնան օրերից մէկին անսպասելի հանդիպեցին աղմկոտ քաղաքի ժխորի մէջ—երկու գժտուած ջահիլները քմահաճ սրտերով—աղջիկը՝ իր տրամադրութեան թեթևութիւններից դէպի հոգու խորութիւնն ընկըղմուող ու նա՝ կռուի ու արիւնի գոյներով եթերային երազները իրականութեան գիրկը նետող տղան՝ նոր փառքի անունը սրտին։ Հանդիպեցին իբրև հին ծանօթներ. ինչե՜ր չէին ապրել այդ երկու ջահիլ սրտերը մինչ այդ... Դառնութիւն և վիշտ և մօտիկներից և հեռուներից և ծանօթներից և անծանօթներից։ Մոռացուել էին շատ երբեմնի անզուգական անուններ ու մնացել էին մենակ, մէկը՝ փառք բերող իր բոսոր հեռանկարներով, միւսը՝ իր հոգու խորութեան ապաքինելու սփոփումով...

Փորձութիւններից պղտոր հայեացքները անխօս հասկացան իրար ու լռեցին, լռեցին անդարձ անցած օրերի մասին։

— „О́ мила дѣвойка“, խօսեց նա այն օտարների լեզուով, որոնց մօտից գալիս էր. „кажи, кажи нѣчто“ ու սկսեցին հինը մոռացման տուած զրուցել գալիք օրերից։

Ամառանոցի երփներանգ ծաղիկներով զարդարուն հեռաւոր դաշտերը ու կանաչածածկ անտառները փոխարինած քաղաքի անշուք սենեակն զրուցում էին երկար և օրուայ նորութիւններից, և անցեալ օրերի արիւնից, և գալիք օրերի արիւնից և տառապածների և տառապողների անձկութիւնից և այդ ամենի հետ այնպէս քմահաճօրէն զուգորդուող իրանց հոգու անձկութիւնից... Ու բնազդօրէն զգում էր Յասմիկը, որ դեռ թարմ վէրքերից չբուժուածին հարկաւոր չէ նոր վէրք

էլ հասցնել ու կանացի քնքշութեամբ գուրգուրում էր նրա սիրտը, այն սիրտը, որը թէկուզ և դարեր շարունակ զարնուի սրտապատին ու ժայռերին ու դարեր շարունակ կոփուի չար ու նենգ կռուի մէջ, տառապատիկ ունէր կըկարօտէր կնոջ գգուանքին ու շոյող հայեացքներին։

— Օ՜ նորից նոր խաչելութիւն, նոր Գողգոթայ, իմ անուշ աղջիկ... Ինչպէս անցնեմ քո մօտով, առանց դադար տալու խոնջացած մարմնիս ու սրտիս, իմ սրտիս կարօտ, իմ հոգուս հանգրուան...

— Իմ աղօթքներով Գողգոթայի ճամբան անգամ կըլինի դիւրին։

— Օ՜ քո անունը, քո մի յուշը միայն բաւական է, որ տանջանքի ճամբան անգամ լինի դիւրին...

— Ես կաղօթեմ, որ ճամբէքիդ ամեն ինչ փոխուի հաճոյքների ու բոյրի. թող մինչև իսկ կռիւը հաճոյք լինի քեզ համար։

— Հոգիս կապուինեմ աղօթքներիդ, սիրտս՝ անուանդ ու թւում է, թւում է, թէ աշխարհներ կարող կըլինեմ տանել, աշխարհներ նուաճել քո ոտքերի տակ դնելու համար, քեզ նուիրաբերելու համար իբրև երախտիքը քո մի շշունջի, քո մի հայեացքի... Օ՜, ինչեր չեմ անի ես հիմա արիւնի ծովի մէջ... Բաւական է միայն քո մի յուշ ժպիտը, որ սուրս աւելի հատու լինի, տենչերս բոսոր, արիւնից էլ բոսոր...

— Արիւնի մէջ արիւնից էլ բոսոր տենչեր պէտք է ունենալ, արիւնոտ աչքեր. ու կըվերադառնաս դու յաղթական կամարների տակից յաղթող ու պայծառ, պայծառ հայեացքով. արիւնը, ուրիշների համար թափուող արիւնը թող բիւրեղացնի կեանքի դառնութիւններից մաքրուած հայեացքդ...

— Ու եթէ գիտենամ, որ այս բոլոր վէրքերից ու տանջանքներից յետոյ հարազատի հոգին կըդիմաւորի անկաշառ ժպիտով, որ անձկալիս գիրկը կըլինի հանգրուան, որ երկարատև նահատակութիւններից յետոյ նրա խնամող ձեռքը կըկապի վէրքերս... Ա՜ եթէ համոզուած լինեմ, մահն անգամ պայծառ ժպիտով կըդիմաւորեմ...

— Մի խօսիր մահուանից. դու կը վերադառնաս ու թէկուզ վէրքերով, բայց վէրքերից բուժուած սրտով ու հոգով։ Մի խօսիր մահուանից ու ժըպտայ, ժպտայ մահուան դէմ։

— Մահուան շնչի դէմ, անթաղ մեռածների ու անլաց մեռնողների մօտ նոր լեզու կըկոփեմ քեզ հետ խօսելու համար, իմ անվեհեր աղջիկ...

* * *

Օրերն անցնում էին տենդային դըրութեան մէջ։ Ամեն օր անկախ ժամ ու ժամանակից՝ կեցցէներով մահուան դէմ էին ուղարկում նորանոր ջահիլներին, ոգևորութեան մէջ մոռացած և՛ տուն, և՛ հարազատ, և՛ գալիք. Յամրէկի ցանկութեամբ որոշուած էր և Բորիսի մեկնելու օրը։ Ծաղիկներով ու ծիծաղով, աղմուկով ու աղաղակով էր ցանկանում ճանապարհել Բորիսին։ Պէտք էր լռեցնել և մոռացնել տալ անջատման բոլոր ծանրութիւնը։ «Или со щитомъ, или на щитѣ». փայլփլում էին սրի վրայ ոսկի խաչի տակ փորագրուած բառերը։

Հնչեց վերջին զանգը. կեցցէների ու ուռաների հետ լսուեցին և զսպուած հեծկլտանքներ... «Դարձիր յաղթութեամբ», լսուեց մի ըստ երևոյթին հաստատուն ձայն.— Բորիսը դառը ժպտաց միայն։

Դարձեալ մի վայրկեան և գնացքը բաժանեց նրանցից անծայր կարօտով կեանքին կառչող ու մահուան սարսափով մահուան դիմողին զուգէ առյաւէտ... «Դարձիր յաղթութեամբ» դեռ երկար ժամանակ հնչւում էին աղջկայ բառերը Բորիսի ականջին. «Или со щитомъ, или на щитѣ» փայլփլում էին սրի վրայ ոսկի խաչի տակ փորագրուած բառերը...

... Ո՞վ է պատասխանատուն արիւնի ծովի մէջ...

Լեյլի

ՆԻԿՈԼ ՄԱՄԵԱՆ

—

Իր հայրենի Դիլիջանում, կանանչ սոսի դալար պսակներով, բոլոր մայրերի արցունքով օծուած, բոլոր հերոսների հիացքն ու «երանի՜»-ն խլած՝ գերեզման իջաւ քաջամարտիկ Նիկոլը։

Մահեր կան, որոնք մի-մի անմահութիւն են։ Այդպէս էր Նիկոլի մահը։ Հերոսներ կան, որոնք մահից յետոյ են միայն երևում։ Այդպէս էր Նիկոլը։

Կրթութիւնը վերջացնելով՝ նա մըտնում է զինուորական ծառայութեան, ստանալով սպայական աստիճան... Մինչ այս պատերազմը՝ մասնակցել է երկու գործողութեան թշնամիների դէմ, արժանանալով շքանշանի և գովասանքի։

Երբ սկսում են հայ-թիւրքական եղբայրասպան աւերածները, Նիկոլը, որպէս սպայ, իր սրբազան պարտքն է կատարում Ղազախի ինքնապաշտպանութեան գործում։

Երբ սկսուեց ռուս-տաճկական պատերազմը, նա մեծ փափագ ունէր թողնել կապիտանական աստիճանը և գլուխ անցնել հայ խմբերից մէկին։

Սակայն այդ չէ իրագործւում։ Էնվէրեան բանակը պատռում է Օլթիի գիծը և ներս խուժում։

Պէտք է առժամ հեղեղի առաջն առնել մինչև զօրքի հասնելը։

Եւ ուղարկւում է Նիկոլն իր ջոկատով։ Զինուորների վկայութեամբ՝ նա հրաշքներ էր գործում, միշտ ամենավտանգաւոր տեղը, սուրը մերկացրած, նոյնիսկ մի վէրք ստացած։ Եւ ընկնում է շրապնելի հարուածից այն պահուն, երբ կատարել էր իր պարտքը։

Պատերազմի դաշտից իր ցանկութեան համաձայն աճիւնը բերւում է Դիլիջան։

Ուխտի էր եկել մեր շրջանի բնակչութիւնը նրա թարմ աճիւնին՝ առանց ազգի ու սեռի խտրութեան։

Երեք զամբանական խօսեցին, որով խուռն. հարիւրաւոր բազմութեան առջև վերակենդանացան մեր անցեալ հերոսներն էլ։

Յաւէրժ յիշատակ...

Վ. Ե. Ց

Օ՛Ն, ԶԷՆՔԵՐԴ ԱՌ...

—

Մեռան երկնքում աստղունքը-գոհար.
Տնքո՜ւմ է, տնքում մթնումը անծէր
Խելագար մի ծեր,
Այնպէ՜ս վշտահար.
Օ՜, իմ հազա՛րնիկ, իմ ծաղկո՛ւնք անսէր,
Անցօղ, անթաղար։
Թախծոտ մի մրմունջ ձորակում
սառած

Ո՞վ է մորմոքում հեռուից սրտմաշուք,
Աղօ՞թք թէ սեւ-սուգ.
Ո՞ղջ է թէ մեռած.
Լռի՛ր, իմ փոքրի՛կ, ոճի՞ր է շշուկ,—
Անցնո՜ւմ են, կամա՜ց...
Հոծ ստուերներում՝ համր կարաւան,
Մերկ ու ցաւատանջ անցնում է անվերջ,
Բուք ու ձիւնի մէջ
Լո՜ւռ, շարան-շարա՜ն.
Թարմ փոսը ծածկից գանգերի մի շեղջ,—
Ճամբորդի կայան։
Ո՜ւյ, ո՜ւյ... հեկեկում մահագուժ հողմը.
Մի սեւ ուրուական մանգաղը ձեռքին,
Հնձում է կրկին
Օ՜, ամեն կողմը.
Կարմիր է ցանել ճերմակ վերելքին,
Մարտի վէս քուրմը։
Անվար դաշտերում՝ ժանգոտած գու-
թան,
Շէն խրճիթներում ծուխը թանձրածալ,
Էն տեղից անցա՛ր
Իմ հերոս անցո՛րդ, դէպի գողգոթա՜ն,
Ասա՛, չտեսա՞ր
Մարդակեր Յուդան...
Ահա՛, երգում են ուժգին ու խռպոտ,
Զառծ նայուածքներ կարմիր խաւարում,
Վե՜ր, վե՜ր են նայում.
Իմ կտրիճ անցորդ
Տե՛ս, մի շշուկ կայ բոսոր-կամարում,
Անհեղ ու գթոտ։
Սուրաց ու անցաւ մըրիկը խելառ,
Խլեց ու տարաւ վարդը մայիսի
Եւ քօղը հարսի,
Ժպիտները վառ...
Սրբի՛ր աչքերդ, ժամը չէ լացի.—
Ո՛ն, զէնքերդ առ...

Ազատ-Վշտունի

ՀԱՐԵՒԱՆՆԵՐԸ

(Կամաւորի յուշատետրից)

I

Երեք օր շարունակ գիշեր ու ցերեկ սարի գլխին, հիւսիսային արջերի նման բուք ու ձիւնի մէջ՝ դիրք բռնելով էինք զբաղուած։ Հինգ հարիւր հոգի էինք և կռւում էինք հազարների դէմ։ Նրանք լաւ էին իմանում մեր թուի փոքրութիւնը, բայց և այնպէս չէին համարձակւում իրենց ամուր դիրքերից դուրս գալ՝ մեզ վրայ յարձակուելու, որովհետև նրանք փորձով գիտէին «գեաւուր» հայի արձակած գնդակի անսխալականութիւնը։

Երրորդ օրուայ արշալոյսին՝ մեր փամփուշտակալները դադարկուել սկսեցին։ Ռազմամթերքը յետ էր մնացել, իսկ առանց փամփուշտի կռուելն անհնարին էր. պէտք էր անխուսափելի մահուան միայն սպասել։

— Պահեցէք ամենավերջին փամփուշտը ձեզ համար, մեզ ամօթ է կենդանի թշնամու ձեռքն ընկնել, պատուիրել էր հրամանատար Ա.-ը։

Մեր բախտից մեզ չվիճակուեց կատարել հրամանատարի պատուէրը։ Յանկարծ մառախուղը իջաւ, կապարի պէս լցրեց ամբողջ տարածութիւնը, իր գորշ պատանքին մէջ պարուրելով սար ու ձոր և թշնամու դիրքերը։ Այլեւս չէր լսւում գնդակների բազմահնչիւն սուլոցը և ոչ էլ թնդանօթների վայրագ որոտը. ասես մի հսկայ և ուժեղ ձեռք խեղդեց ամեն ձայն, ամեն շշուկ։

— Դէպի յետ,—լսուեց հարիւրապետի ձայնը։

Զգուշութեամբ ու շունչ բռնած՝ իջանք բլուրներից դէպի ձորն ու բռնեցինք մօտակայ Թրքարնակ Խ... գիւղի ճանապարհը, այնտեղ հանգստանալու համար։

Գիւղը հասնելիս՝ մեր առաջին գործը եղաւ ճշտել մեր ընկերների թիւը։

Չորս սպանուածներ և եօթը թեթև վիրաւորներ ունէինք երեք օրուայ անհաւասար կռուի ամբողջ ընթացքում, սակայն դրանցից գատ կորցրել էինք երրորդ հարիւրակի հինգերորդ տասնապետ Կարօին. վերջին օրը, արշալոյսին ոչ մի ընկեր նրան չէր տեսել։ Արդեօք գերի՞ էր ընկել, թէ՞ նրա դիակը մնաց սարում, և ո՞ւր... մտածում էինք բոլորս։

II

Կարօն ուզում էր, ճակատից խփել այն ճերմակ ձիաւորին, որ մի քանի հարիւր քայլ հեռուից կրակ էր թափում իր վրայ։ Նա այնքան էր տարուել այդ մտադրութիւնից, որ ինքն էլ չէր իմացել, թէ ո՞րքան առաջ էր անցել իր ընկերներից, բոլորովին մենակ և աննկատելի։ Միայն այն ժամանակ զգաց այդ բանը, երբ մառախուղը ծածկեց իր աչքերից ամեն ինչ և ճերմակ ձիաւորին. դադարեց հրացանների որոտը։ Զոքած մնաց մի քարի ներքև՝ մի քանի րոպէ մտածկոտ ու սպասողական դրութեան մէջ։ Վերադառնա՞լ,—դա անխոհեմութիւն էր, չէ՞ որ ոչինչ չէր տեսնում և ճանապարհներն իրան անծանօթ էին։ Ոչ, պէտք էր սպասել. գուցէ իր ընկերները իմանում էին, թէ ո՞ւր էր ինքը, և գալու էին իրան տանելու... Յանկարծ իր առջևը կերպարանւորուեց ճերմակ ձիաւորը, փայլուն ու արիւնալի աչքերով։ Հրացանը նրան ուղղեց ճիշտ այն պահուն, երբ ձիաւորն էլ յանկարծակիի եկած՝ քաշում էր իր հրացանի բլթակը։

— Բո՛ւմ, բո՛ւմ, բո՛ւմ... ճյ, ճյ...

— Բո՛ւմ, բո՛ւմ, մա՜խ, մա՜խ...

Երկուսի ձեռքիցն էլ զէնքերը վայր ընկան, թուրք զինուորը և հայ կամաւորը միմեանց գնդակից վիրաւորուած՝ թաւալեցին ձիւնի մէջ։

Նրանք ընկած տեղերից աշխատեցին վեր կենալ, բայց ի զուր, նորից ընկան գետին ուժասպառ, միմեանց մօտ։

Կարօն աչքերը փակեց. նա ընկաւ երեւակայութեան աշխարհը, ինչ որ աղօտ ու անկապ պատկերներ շարժւում էին նրա առջևից, նա յիշել սկսեց ամեն մի անցքը իր բոլոր մանրամասնութեամբ... Յետոյ պատկերները գունաւորուեցին, պայծառացան և նա որոշակի տեսնում էր իր ծերուկ հօրը, որ հրավառ փուռի առջև կանգնած՝ հաց էր թխում յաճախորդների համար. Նրա բազմաակօս ճակատից ինչպէ՜ս էր հոսում քրտինքը... Ահա իրանց դրան առջև հօր արնաշաղախ դիակը, ինչպիսի հայեացքով էր դիտում իր որդուն... Իրենց հարևան Ռաշիդը արնաներկ դաշոյնը սրբեց ու մի կուշտ քրքջալով՝ հայհոյեց ու հեռացաւ... Յետոյ՝ պառաւած մայրը արտասուաթոր աչքերով ճանապարհ դրեց Կարօին դէպի հեռու աշխարհ՝ բախտ որոնելու.— Բալա՜ ջան, շուտ վերադարձի՛ր, որ քեզ տեսնեմ և հանգիստ սրտով գերեզման իջնեմ,—ասել էր իրան...

Կրծքի թմրած վէրքը ցրտի ազդեցութեան ներքոյ սկսեց կսկծալ. Կարօն ցաւից աչքերը բացեց, նայեց երկինքին, յետոյ շուրջը և իր նայուածքը հանդիպեց թուրքի ապշահար նայուածքին, որ իր պէս կուչ եկած մրմնջում էր.

— Օ՜ֆ, ո՜ւյ, հէյ վախ, ը՜...

— Գոնէ տղամարդու պէս մեռիր է,

տնաքանդ, եթէ չէիր կարող դիմանալ ցաւին, թող կնոջդ ուղարկէիր քո փոխարէն.—փսփսաց Կարօն։

— Օ՜ֆ ջանըմ, մեռնողի վրայ ծիծաղելը լաւ չէ,—պատասխանեց Թուրքը՛

— Մե՞նք հայերս մեռնելու ժամանակն էլ կըծիծաղենք։

Նրանք լռեցին, մէկը միւսին էր նայում, ամեն մէկն աշխատում էր կարդալ դիմացինի դէմքը...

— Կարօ...

— Ահմէտ... Ռաշիդի որդի՞ն, ինչ զուգադիպութի՜ւն, իմ հարեւանս, հօրս սպանողի որդի՞ն, այստե՞ղ, կողք-կողքի...

— Ճակատագի՜ր, Կարօ, ճակատագի՜ր. այժմ, որ գտնւում ենք այստեղ, երկուքս էլ առանձին, երկուքս էլ վիրաւոր... Մոռացի՜ր Կարօ, մոռացի՜ր անցեալը... Անիծի՜ր հօրս, անիծիր... պատճառ եղողին... օ՜ֆ, օ՜ֆ, հէյ վախ...

Երկու հին հարեւաններ, որ ապրել էին տարիներ շարունակ, քով-քովի, միեւնոյն փողոցում, նոյն քաղաքի մէջ, երբէք այնքան անկեղծ չէին մօտեցել միմեանց, երբէք իրենց սիրտը մէկ-մէկի լայն բաց չէին արել, որքան այս րոպէին... Որքա՜ն բաներ ունէին ասելու իրար, գերեզմանի դրանը... բայց ի զուր... ի՞նչ օգուտ...

— Մոռանա՞լ, միթէ՞ կարելի է. ես կըմոռանամ, լա՛ւ, իսկ ողջ մնացողնե՞րը, իմ ընկերնե՞րը, իմ ազգը, մի՞թէ դուք աշխատեցիք մեզ մոռացնել տալ այն բոլորը, ինչ որ արել են ձեր հայրերը դարեր շարունակ ինձ և հազարաւոր ինձպէսներին, — ասաց Կարօն մի րոպէի լռութիւնից յետոյ։

— Կարօ, ո՞ւմն է յանցանքը, ի՞մը, ժողովուրդի՞ն, չէ՛, չէ՛, մենք մեղք չունենք, մեզ այդպէս են սովորացրել, մեզ այնպէս են ասել... Ա՛յ, սրանից մի քանի ամիս առաջ հանգիստ պարապում էի իմ գործով. եկան, ինձ ասացին, որ պէտք է գնալ պատերազմ, կռուել թշնամու դէմ... ի՞նչ թշնամու դէմ, ո՞ւմ թշնամու դէմ — չէի իմանում և այժմ էլ չեմ գիտեր... մեզ այդպէս ասացին... ա՜խ. ո՛յ, վէ՜րքս...

— Խե՜ղճ մարդ, անգիտակից զո՜հ... ասաց ինքն իրան Կարօն,—իսկ ե՞ս, ինձ ո՛չ ոք չստիպից, ես ինքս կամաւոր եկայ,—հայրենիքիս համար...

Նրա շունչը կտրուեց, էլ չը կարողացաւ շարունակել. աչքերը կըրկին փակեց ու սկսաւ խոր-խոր շընչել։

Հայրենիքիս շուգ ու շիւան
Ինձ դուրս կանչեց փակ կեանքից.
Տանջուած հայրենիքիս սէրը
Զվախեցուց վտանգից...

Հեռուից լսուող իր սիրած երգի ուժգին հնչիւններն սթափեցրին նրան. մի մեղմ ժպիտ անցաւ նրա դժգոյն երեսի վրայից, գլուխը բարձրացրեց ու հազիւ կարողացաւ ճանաչել իր զինուոր ընկերներին, որ արդէն մօտեցել էին։

— Կարօ՛ ջան, քեզ մատաղ, ղօչաղ կա՛ց.—գրկելով նրան ասաց Արտաշէսը.—ընկե՛ր, ձին մօտիկ բե՛ր, վրայ դնենք,—դարձաւ կանգնած ընկերին, որ ձիուն յենած՝ տրտում ու մտամոլոր թուրքին էր նայում։

— Չէ. չէ, ի զո՜ւր, ես կըմեռնեմ այստեղ, անտրտունջ և ուրախ ձեր մէջ... տարէք նրան... էն միւսին... չսպաննէք... բժշկին ասէք թող ծունկը կտրի... իմ գնդակը փշրեց... չը սպաննէք, հաշմանդամ, միշտ առանց ոտքի... իմ հարեւանը... իսկ... այժմ երգ... երգեցէք։

Հինգն էլ մօտեցան, անխօս համբուրեցին իրենց տասնապետին. նրանց աչքերում արտասուք չփայլեց. սըրտերում, կրծքերի ներքև, վրէժխընդրութեան հրաբուխն էր բորբոքւում,— ահեղ ու յաւիտենական...

Ապա հանգիստ հող կըմտնեմ,
Յոյսս դուք էք, ընկերնե՛ր.
Շարունակէք ձեր սուրբ գործեր,
Դաշնակցական վեհ քաջեր...

Տխո՜ւր ու բամբ երգի արձագանգները տարածուեցին տարածութեան մէջ... Անցա՜ն, անցան արիւնաներկ լեռներով դէպի հեռուներ...

Զինապատ նեղ արահետներով իջնում էին բլուրից հինգ ձիաւորներ։ Սև ձիու վրայ վիրաւոր Թուրքը՝ մըտածկոտ. և ճերմակին վրայ Կարօն—աչքերը փակ ու ժպտուն.—երկու հարևանները...։

Զմրան տժգոյն արևի վերջին ճառագայթներն անհետացան վէս լեռների յետևում... գալիք արշալոյսին աւելի փայլուն ծագելու համար...

Ա.-Վ.

ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՕՆԸ

—

(Բանախօսութիւն, արտասանուած այս տարի Բագուի Հայոց դպրոցում Վարդանանց հանդէսի ժամանակ)

—

Մեր պատմութեան մէջ Վարդանանց տօնը մի առանձին հմայք ունի։ Այս տեսակէտից մեր կեանքի և ո՛չ մի դէպք չի կարող համեմատուել նրա հետ։

Սրանից 22 դար առաջ հայերը Սելեւկեանների պարտութիւնից օգտուելով՝ կարողացան իրենց սեփական ջանքերով թօթափել օտարի լուծը և հայի քաղաքական անկախութեան հիմքը դնել, առաջին անգամ հայկական անկախ իշխանութիւն հիմնել։

Պարզ է, թէ ամեն մի ազգի կեանքում ինչպիսի խոշոր, ինչպիսի փառաւոր գործ է սեփական իշխանութեան առաջին հիմնադրութիւնը, քաղաքական ազատ, ինքնուրոյն կեանքի սկզբնաւորութիւնը։

Սակայն մենք ո՛չ միայն չենք տօնում մեր պատմութեան այդ առաջին մեծ գործը, այլ նոյնիսկ չգիտենք դրա մասին, և կարծէք թէ հետաքրքրութիւն էլ չի ներկայացնում։

Հայոց թագաւորութիւնը հազիւ մի դարու կեանք ունէր, երբ հզօր Պարսկաստանը՝ Արևելքի այդ միակ տէրը ստիպուեց գլուխ խոնարհել նրա առաջ։ Տիգրան Մեծը պարսիկներից խլեց առաջնութեան պատիւը և արքայից արքաներին երկրորդական դիրքի իջեցրեց։

Միւս կողմից՝ հայկական թագաւորութիւնը իր ոյժն զգալ տուեց նաև աշխարհի միւս մասի հզօր տիրոջ— Հռոմէական մեծ պետութեան։ Հռոմը հաշուի նստաւ Հայաստանի հետ և յաճախ ստիպուեց զգուշաւոր քաղաքականութեան հետևել, չընդհարուել հեռու արևելքում կազմուած այդ մեծ ոյժի հետ։ Այս հանգամանքների շնորհիւ Հայաստանի սահմանները չտեսնուած չափերով ընդարձակուեցին— հիւսիսային կողմից հասան Կուր գետի հովիտները, հարաւից մինչև Պաղեստին, արևելքից Պարսկաստանի խորքերը և արևմուտքից մինչև Կապադովկիայի արևմտեան սահմանները։ Զինական ոյժի, աշխարհակալութեան

թէև կործանուեց, բայց մի փառաւոր շրջան ստեղծուեց, որի նմանը չունեցաւ հայոց թագաւորութիւնն իր գոյութեան ամբողջ ընթացքում։

Սակայն այդ էլ հայութեան համար ոգևորութեան աղբ'ւր չդարձաւ. մենք չտօնեցինք և չենք էլ տօնում տիրապետութեան այդ փայլը։

Արշակունեաց թագաւորութեան անկումից յետոյ մինչև Բագրատունեաց թագաւորութեան հիմնադրութիւնը՝ հայ կեանքի պատմութիւնը երկու թշնամի տարրերի—պարսիկների և արաբների աւերածութեանց մի սոսկալի տեսարան է ներկայացնում։ Բագրատունեաց թագաւորութիւնը եթէ ոչինչ էլ արած չլինէր, բաւական էր, որ հայի ֆիզիքական գոյութիւնը պահպանեց։ Դրա համար միայն յարգանքի ու տօնախմբութեան արժանի պիտի լինէր։

Սակայն ոչ Բագրատունեաց և ոչ էլ Ռուբինեաց թագաւորութիւնների սկզբնաւորութիւնները ոգևորիչ հանդէսների նիւթ չդարձան ու նրանցով չոգևորուեցինք։

Մի խօսքով՝ մեր բազմադարեան պատմութեան ամբողջ ընթացքում,—ուր շատ են փառաւոր րոպէներ թէ մարտական յաջողութիւնների, թէ քաղաքական յաղթանակների, թէ կուլտուրական նուաճումների և թէ մանաւանդ մեծ մարտիրոսագրութիւնների—և ոչ մի գործ չի կարողացել այնպիսի բուռն թափով ցնցել հայութիւնը, բարոյական այնպիսի անքակտելի կապով միացնել ամբողջ ազգը, ոգևորութեան ամենամեծ աղբիւրը, որպէսին Վարդանանց պատերազմն է՝ իր հետ կապուած բոլոր անցուդարձերով։

Այդ պատերազմը շատ շուտով դարձաւ հայութեան ամենամեծ սրբութիւններից մէկը։ Մեր ամբողջ գրականութիւնը—կրօնական բանաստեղծութիւնը· պատմագրութիւնը, արդի գրաբառ ու աշխարհիկ բանաստեղծութիւնը ոգևորուեց, ներշնչուեց սրանով։

***

Արդ՝ ինչո՞ւմն է այդ պատերազմի մեծ արժէքը, այն հմայքը, որով տասնեակ տարիներ ապրել է մեր ժողովուրդը. ինչո՞ւ հայը իր ամբողջ էութեամբ նրան է փարել, նրան է ընտրել իր պատմական կեանքից միակ սրբութիւն սրբոց։

Նախ քան այս հարցին պատասխանելը՝ անհրաժեշտ է մի թռուցիկ ակնարկով պարզել Ե. րդ դարու մի քանի պայմաններ։

Այդ ժամանակամիջոցում Պարսկաստանն այնքան ուժեղացել էր, որ իրաւամբ կարող էր պարծենալ, թէ աշխարհում իրան հաւասար ոչ մի ոյժ չկայ։ Բիւզանդական կայսրութիւնը պառակտուած, կրօնական վէճերի ասպարէզ դարձած՝ արդէն մի քանի անգամ պարտութիւն էր կրել պարսիկներից։ Պարսկաստանի հիւսիսից Հեփթաղների յարձակումներն ասպատակութեան բնոյթ ունէին։

Ուրեմն աշխարհում ոչ մի ոյժ չկար, որ լուրջ հակառակորդ հանդիսանար Պարսկաստանին Ե-րդ դարու կիսում։

Պարսկաստանի այս հզօրութիւնն ամբողջապէս զգացող կրօնամոլ Յազկերտ II այն հաստատ համոզմունքն էր կազմել, որ ոչ մի բան անկարելի չէ իր համար. կըհրամայէ՝ և ամեն ինչ կըկատարուի։

Եւ ահա մանր ազգութիւններին ձուլելու հարցը այս անգամ ամենաուժեղ թափով հետապնդւում է։ Հալածանքի են ենթարկւում ասորիներին՝ յոյն եկեղեցականների հետ կրօնական թղթակցութիւններ ունենալու համար, հրէաներին տանջում են հաւատի պատճառով, նրանց արգելում են շաբաթ սուրբ պահել։ Բայց Յազկերտը իր բարկութիւնն ամենից աւելի հայերի գլխին է թափում, որովհետև պարսիկ քաղաքագէտների կարծիքով՝ հայ ազգը ամենից աւելի աչքի ընկնող, ամենից աւելի ազդեցիկն է հպատակ բոլոր ազգութիւնների մէջ, և եթէ հայը մոռանայ իր ազգութիւնը, ձուլուի պարսիկների հետ, միւսները՝ ինչպէս վրացիները, աղուանները և ուրիշները,—հեշտութեամբ կըձուլուեն՝ հետևելով հայերի օրինակին։

Ուրեմն Պարսկաստանում բոլոր օտար ազգերին ձուլելու համար՝ ամբողջ աշխարհը սարսափեցնող պարսիկը ամենակտրուկ կերպով պահանջում է հայերից ձեռք վերցնել հայութիւնից, մոռանալ կրօն, լեզու, նախնեաց աւանդութիւններ ու ձուլուել և կամ բռնի ուժի առաջ ոչնչանալ, ջնջուել...

***

Ինչպէս միշտ եղել է ու մեր օրերում էլ կրկնւում է, այսպիսի տագնապալի րոպէում հայութեան կարծիքը տարբերուել է։ Մի մասը մտածել և մտածում է. «Մենք՝ ողորմելի հայերս ի՞նչ ոյժ ունինք, որ կարողանանք դիմադրել աշխարհի հզօրներին. մի՞թէ մենք կարող ենք հակառակել պարսից ահռելի ուժին, որից Բիւզանդական մեծ պետութիւնն անգամ սարսափում է և ենթարկւում նրա հրամաններին։ Ինքնասպանութիւն, խելագարութիւն կըլինի ողորմելի ուժերով հակառակել և մի ամբողջ ժողովրդի ֆիզիքական ոչնչացման պատճառ դառնալ»։

Սակայն միւս մասը բոլորովին այլ կերպ էր մտածում, դատում. սրա կարծիքով՝ խելագարութիւն, ինքնասպանութիւն է, երբ փոքր ազգութիւնը սարսափելով բռնի, կոպիտ ուժից՝ ենթարկւում է նրան և ինքն իր ձեռքով խաչ դնում իր գոյութեան վրայ՝ ընդ առաջ գնալով բռնակալի ցանկութիւններին։ Այսպիսի պարագաներում անխուսափելի է դառնում մանր ազգութեան մահը, անհնարին նրա ինքնուրոյն գոյութիւնը, այնինչ կոպիտ ուժի, բռնութեան դէմ եղած դիմադրութիւնը որոշ շանսեր պահպանում է ազգի ինքնուրոյնութիւնը փրկելու համար, նամանաւանդ երբ այդ դիմադրութիւնը բարոյական, իդէալական մի բարձր սկզբունքով ամբողջ ժողովրդին կարող է ծառացնել բռնակալութեան դէմ, երկար դիմադրութիւն ցոյց տալ։

Այսպէս ուրեմն՝ հայ ժողովուրդը պիտի լուծի այդ արիւնոտ հարցը, որ մարդկային պատմութեան ամենախոցոտ վէրքերից մէկն է եղել մինչև այսօր, և դժբախտաբար մենք, հայերս, յաճախ ենք կանգնել այդ սոսկալի երկընտրանքի առաջ։

Վերոյիշեալ երկու մտածողութիւններն էլ ունեցան իրենց գործադրողները։ Վարդան Մամիկոնեանը իր 22 համախոհ նախարարներով, մօտ վաթսունվեց հազարանոց բանակով Աւարայրի դաշտն իջաւ՝ բռնակալութեան դիմադրելու։

Ենթադրւում է, որ Վարդանի հետ միացած ոյժը հազիւ Հայաստանի զինական ոյժի կէսն էր. միւս կէսը Վա-

սակ Սիւնեաց իշխանի դեկավարութեամբ ու թելադրութեամբ հաւատարիմ մնաց պարսիկներին, ենթարկուեց բանի ուժի թելադրանքներին, պահանջներին։

Մեզ բոլորիս յայտնի են այս ուժերի բաղխման առաջին հետեւանքը. սակայն Վարդանանց պարտութեամբ չի վերջանում հարցը, ընդհակառակը արիւնոտ մեծ դրամայի սկիզբն է դրւում։ Այդ դրաման տեւում է ուղիղ 33 տարի (451—484), մինչեւ Նուարսակի դաշնագրութիւնը։

Այս 33 տարիների ընթացքում կոպիտ, բանի ուժը աշխատում է ճնշել, սպանել մարդկային հոգին, խիղճն ու համոզմունքը, իսկ հոգին—որչափ էլ թոյլ ու անօգնական—դարձեալ չի մեռնում, նա դիմադրում, պաշտպանում է, յաղթում, յաղթւում, մինչեւ որ կոպիտ ֆիզիքական ուժը համոզւում է, որ հոգին անմեռ է, պէտք է նրան ազատ թողնել։

Հոգեկան ուժի, խղճի ու համոզմունքի յաղթանակ՝ բանի, կոպիտ ուժի դէմ. ահա ինչ ստացան հայերը իրենց երկար տարիների մեծ զոհաբերութիւնների գնով։

* * *

Վահան Մամիկոնեանը Նուարսակի դաշնագրութեամբ հետեւեալ երեք պայմաններն է ընդունել տալիս պարսիկներին. ա) Քրիստոնէութիւնը հայոց աշխարհի օրինաւոր կրօնը պիտի ճանաչուի, ոչ մի հայ մարդ չպիտի բանի կրօնափոխ լինի եւ ոչ ոքի հաւատարմութեան համար մեծութիւն ու իշխանութիւն չպիտի տրուի. բ) Արժանաւոր ու անարժան անձանց մէջ խտրութիւն պիտի լինի, անպիտան ու վնասակար մարդիկ հեռու պիտի պահուին եւ լաւերն ու օգտակարները առաջ պիտի քաշուին. գ) Թագաւորը ամեն ամբաստանութիւններին չպիտի հաւատայ, այլ ինքն անձամբ պիտի քննէ ամեն բան եւ դատաստան անէ։

Հետաքրքիր են Վահան Մամիկոնեանի խօսքերը կցուած այս պայմաններին. «Եթէ այս պայմանները կընդունէք, կը հաշտուինք ձեզ հետ, իսկ եթէ չէք ընդունիլ՝ պատրաստ ենք մինչեւ վերջին շունչը կռուելու, եւ աւելի ուրախութեամբ կըմեռնենք, քան թէ պարսիկ մարդու առաջ գլուխ խոնարհեցնենք»։

Դէպքերի այս թռուցիկ նկարագրութիւնից արդէն մասամբ երեւում է, թէ ինչ բնոյթ է կրում այս տօնը. բռնակալութեան դէմ բարոյական մեծ ուժի յաղթանակն է եւ ոչ մի կրօնի միւսի դէմ տարած յաղթութիւնը. այս տօնի մէջ խտացած է հայ ժողովրդի հասարակական, անհատական-բարոյական ամենամեծ արժէքները. այս տօնի մէջ նա դրել է իր խղճի ու համոզմունքի, իր հայրենիքի ազատագրութեան մեծ պայքարն ու յաղթանակը։ Տեսէք, թէ ինչպիսի պայծառ հակադրութեամբ մեր ժողովուրդը այս դրամայի մէջ ցուցահանել է իր հասարակական-բարոյական իդէալ. մի կողմը՝ Վարդաններն են, որոնց երկրպագում է, միւս կողմը՝ Վասակները, որոնցից խորշում է։ Մի կողմը հայ ֆիզիքապէս անզօր, անօգնական ժողովրդի բարոյական մեծ ուժն է, միշտ պատրաստ՝ անսահման անձնուիրութեամբ իր ազգային սրբութիւնների. իր խղճի ու համոզմունքի ազատագրութեան համար հերոսաբար ծառանալ բռնութեան դէմ. միւս կողմը՝ կոպիտ, անհոգի ուժն է՝ զուրկ բարոյական արժէքից, միշտ պատրաստ սրբապղծելու մարդկային խղճի ու մտքի բոլոր սրբութիւնները. մի կողմը՝ ազատութեան վառ տենչերն են, անձնազոհութիւն, հերոսութիւն, ընդհանրութեան շահին անձնականի զոհաբերութիւնը, միւս կողմը՝ սարքամտութիւն, անձնական հաշիւներ, կեղծիք, խաբեբայութիւն։ Մի կողմ Վարդանն է, որ ամենից առաջ հայրենասէր է, պատրաստ իր կեանքը զոհաբերելու հայ ժողովրդի փրկութեան համար. նա գիտէ բռնակալութեան անհոգի ուժի առաջ հերոսաբար դուրս գալ, մահն արհամարհել. նա չի կարող տանել ստրկական կեանքը, նրա խիղճը ու համոզմունքը ազատ պիտի մնան, ազգի. ժողովրդի շահը բարձր է բոլորից, որի համար նոյնիսկ կեանքը պիտի զոհել. միւս կողմը Վասակն է, առաքինութեան այս բոլոր յատկութիւնների հակառակ գծերով։

Մեզ թւում է, որ հայ ժողովուրդը աւելի բարձր, աւելի մեծ սկզբունքներ չէր կարող ունենալ իր պատմութիւնից, իր անցեալ կեանքից։

Եթէ հայը կարողացել է հրից ու ջրից անցնել, բարբարոս ազգերի աւերածութիւնների արեան ծովից դուրս գալ, իր ուրոյն կեանքն ազատել ու մինչեւ մեր օրերը հասցնել եւ դեռ ապագայ երջանիկ կեանքի յոյսերն ունենալ ու դրա համար ոյժ ցուցադրել,—հասարակական-բարոյական այս արժէքների շնորհիւ է։

Ու այսօր, աշխարհի այս մեծ տագնապի պահուն, երբ մենք նորից կանգնած ենք մեծ փորձութեան ճանապարհին, Ե-րդ դարու մեծ պրօբլէմի առաջ, մենք դարձեալ կըյաղթանակենք, եթէ մեր հասարակ ժողովուրդը այդ դարու բարոյական մեծ տոկունութիւնը, մեծ ոյժը գործադրի, մեր բարձր դասը հետեւի ուխտապահ նախարարների օրինակին եւ ոչ մի զոհողութեան առաջ կանգ չառնի, երբ մեր իգական սեռը Ե-րդ դարու կանանց առաքինութիւնից յետ չմնայ։ Մի խօսքով, երբ Ե-րդ դարու ոգով ազգովին կըծառանանք մեր խղճի ու մտքի ազատագրութեան, մեր ժողովրդի, մեր ազգային իդէալների առաջ կանգնած բոլոր խոչընդոտների դէմ, մենք եւս կունենանք մեր յաղթանակը, Նուարսակի դաշնագրութիւնը։

Ռ. Բ.

ԲԱԼԿԱՆԵԱՆ ԱԶԳԵՐԻ ԱԶԱՏԱԳՐՈՒՄԸ

III

ԲՕԼԳԱՐԻԱՅԻ ԱԶԱՏԱԳՐՈՒՄԸ*)

Եօթանասնական թուականներին նորից ալեկոծւում են Բալկանները։ Այս անգամ ապստամբութեան ազդանշանը տալիս են Բօսնիան եւ Հերցեգովինան։ Ապստամբներին միանում են նոյնպէս սերբ եւ չերնօգօրիացի կամաւոր խմբերը։ Նրանք բռնում են լեռնային ամենադժուարին անցքերը եւ անառիկ վայրերը եւ զանազան կողմերից յարձակւում թիւրքերի վրայ։ 1875 թուին Բ. Դուռը խոստանում է բարենորոգումներ մտցնել Բալկանեան այդ երկիրներում, բայց ապստամբնե-

*) Տես «Արեւ»-ի յաւելուած № 4։

րը հաւատ չէին ընծայում նրա խաբէական խոստումներին։ Նրանք փորձից և պատմութիւնից գիտէին, թէ Բ. Դուռը որքան յարգել գիտէ իր տուած խօսքը և որքան սնանկ է պետական ներքին կեանքի վերաշինման, լայն բարենորոգումների տեսակէտից։ Առանց զէնքը և ապստամբութեան դրօշը վայր դնելու, նրանք պահանջում էին եւրոպական պետութիւնների երաշխաւորութիւնը։ Ռուսաստանը, Ֆրանսիան և Իտալիան համաձայն էին, դէմ էր գլխաւորապէս Անգլիան։ Նա վախում էր Ռուսաստանից՝ Բալկաններում նրա ամէն մի նուաճման կամ ազդեցիկ քայլի մէջ տեսնելով Անգլիայի պետական շահերի վտանգումը։ Ճարպիկ սուլթանները օգտուելով եւրոպական մեծ պետութիւնների այս ներհակ դրութիւնից, առաջ էին տանում իրենց նենգ, խաբէական քաղաքականութիւնը և միաժամանակ ջարդեր սարքում Բալկանների այս կամ այն վայրում։

Բայց բռնկուած հրդեհը, սկսուած ապստամբութիւնը ոչ միայն չէր դադարում կամ մեղմանում, այլ աւելի ու աւելի մեծ չափեր էր ընդունում։ Յաջորդ տարում, 1876 թուին, ապստամբութեան ալիքները հասնում են նաև Բօլգարիա։ Սերբիան և Չերնօգօրիան ամէն միջոցներով շարունակում են իրենց աջակցութիւնը՝ կամաւորներով, զէնքով, ռազմամթերքով։ Դրութիւնն օրէցօր լուրջ բնաւորութիւն էր ստանում և սպառնում միջազգային բարդութիւններ։ Ռուսիան, Պրուսիան և Աւստրիան մի ընդհանուր յայտագրով դիմում են Բ. Դրան և յիշեցնում խոստացած բարենորոգումների մասին։ Յայտագրի թելադրողը Ռուսիան էր և գրուած էր խիստ, վճռական տոնով։ Անգլիայի համար այդ դիմումն ունէր վերջնագրի նշանակութիւն։ Արդէն Թիւրքիայի մէջ ծայր էր տալիս խիստ ատելութիւն դէպի ռուսները, որոնց վրայ նրանք նայում էին որպէս իրենց ոխերիմ և պատմական թշնամու։ Անգլիան անխուսափելի համարելով ռուս-տաճկական պատերազմը, իր նաւատորմիղն ուղարկում է յունական ջրերը։

Հէնց այդ միջոցին տեղի է ունենում Տաճկաստանի մայրաքաղաքում պալատական յեղաշրջում, գահընկեց է լինում Մահմուդ V-րդ Սուլթանը և գահ բարձրանում խորամանկ և ճկուն Աբդիւլ-Համիդը (1876 թ. 31 օգոստոսի)։ Բայց այս հանգամանքը որև է ազդեցութիւն չի անում տիրող քաղաքական դրութեան վրայ։ Կռիւը Բալկաններում մեծ թափով շարունակւում էր և հետզհետէ մեծ պատերազմի բընոյթ ստանում։ Ընդհանրապէս յաղթութիւնը Թիւրքիայի կողմն էր։ Թիւրք բանակի ընդհանուր հրամանատարը, Աբդիւլ-Կերիմը մօտենում էր արդէն Բելգրադին։ Սերբիայի վիճակը յուսահատական էր։ Իշխան Միլանը դիմում է եւրոպական պետութիւնների միջնորդութեան, բայց բոլորի կողմից էլ մերժում ստանում։

Ռուսիան, որ աչալուրջ հետևում էր բոլոր անցուդարձերին ու շարժումներին Բալկաններում, այլ ևս անկարող է լինում չէզոք դիրքի մէջ մնալ և սկսում է գործօն մասնակցութիւն ունենալ և զսպել համարձակ Թիւրքիային։ Նա նախապէս ապահովում է երկու կայսրութիւնների, Աւստրիայի և Պրուսիայի չէզոքութիւնը, դաշն կապում նրանց հետ և պատրաստւում պատերազմի Թիւրքիայի դէմ։ Մի կողմից Ռուսիան վերջնագիր է ուղղում Սուլթանին, պահանջելով անմիջապէս դադարեցնել կռիւը Բալկաններում և միւս կողմից դաշն կապելով Ռումանիայի հետ՝ ապահովում է իր զօրքի ճանապարհը այդ գծով դէպի Կ. Պօլիս։ Միաժամանակ նա հաւաստիացնում է Անգլիային, թէ նա աշխարհակալական ձգտում չունի, հետևապէս, չի գրաւելու Թիւրքիայի մայրաքաղաքը։ Միայն հաւանական է գտնում Բօլգարիայի ժամանակաւոր գրաւումը։

Ահա այսպիսի դրութեան մէջ էին քաղաքական յարաբերութիւնները և Բալկանեան բոլոր ժողովուրդները մի անօրինակ յուզումնալից շրջան էին ապրում, երբ Կ. Պօլսում եւրոպական պետութիւնների ներկայացուցիչները, առանց Թիւրքիայի լիազօրի, սկսում են խորհրդակցութիւններ բարենորոգումների մասին Բալկաններում։ Նրանք յանգում են այն եզրակացութեան, որ բարենորոգումները պիտի կատարուեն եւրոպական պետութիւնների անմիջական հսկողութեան տակ, իսկ հսկողութեան համար ունենալու են յատուկ պահակ, եւրոպական պահակ՝ բաղկացած 6,000 հոգուց։

Թիւրքիան այդ որոշման մէջ տեսնելով իր անկախութեան խախտումը՝ չի ենթարկւում դրան և ընտրում է միակ ելքը—զէնք վերցնել Ռուսաստանի դէմ։ Իսկ եւրոպական միջամտութեան առաջն առնելու նպատակով՝ թիւրք ճարպիկ և խաբէական կառավարութիւնն ստեղծում է Միդհատ փաշայի սահմանադրական կօմեդիան։ Ճիշտ նոյն օրը, դեկտեմբերի 23-ին, երբ կատարւում է եւրոպական պետութիւնների ներկայացուցիչների Համաժողովի հանդիսաւոր բացումը Կ. Պօլսում, Սուլթանը հրատարակում է «Օսմանեան սահմանադրութիւնը» և տեղեկութիւն տալիս այդ մասին եւրոպական բոլոր դիւանագէտներին, պաշտօնական հիմնարկութիւններին։ Դրութիւնը միանգամայն փոխւում է, ընդհանուր տրամադրութիւնը յեղաշրջւում։ Հասարակական կարծիքը Եւրոպայում արդէն լիապէս բաւարարուած էր, իսկ Համաժողովի գործունէութիւնը բոլորովին թուլանում։ Անգլիայի դերը վճռական էր Թիւրքիայում կատարուող այս բոլոր անցուդարձերի մէջ. Նա ոչ մի կերպ չէր կարողանում հաշտուել Կ. Պօլսի գըրաւման հետ՝ Ռուսիայի կողմից։ Եւ նա այժմ գոհ էր այս ընդհանուր վախճանից։

Ն. Ֆրանգեան

(Կը շարունակուի)

